

Մամուլի հաղորդագրություն

Դեկտեմբերի 12-ին Ամերիկյան համալսարանի նոր մասնաշենքում ՀՀ վարչապետի Բարձր հովանու ներքո տեղի ունեցավ Հայաստանի Ռոբոտների Բաց Առաջնությունը /ArmRobotics/, որի նպատակն էր համախմբել երիտասարդ գիտնականներին, ներգրավել սփյուռքի գիտական ներուժը, երիտասարդների մոտ զարգացնել թիմային մտածելակերպը և աշխատանքը, խթանել նոր տեխնոլոգիաների մուտքը Հայաստան:

Առաջնության ընթացքում անցկացվեց «Իրեր տարբերող և դասակարգող» մրցույթը: Մասնակցեցին 3 թիմ՝ RobotX, CyberRAU և Team X: Նրանք նախագծել և պատրաստել էին ռոբոտներ, որոնք պետք է իրարից տարբերեին առարկաներն ըստ նրանց երկրաչափական տեսքի: Քանի որ ռոբոտներից ոչ մեկն ամբողջովին չկարողացավ կատարել իր առջև դրված խնդիրը, ժյուրին չչնորհեց 1-ին, 2-րդ և 3-րդ տեղի մրցանակներ, փոխարենը, թիմերին ոգևորելու համար, նրանց տվեց խրախուսական մրցանակ՝ յուրաքանչյուրին 30 հազարական դրամ: Ժյուրիի կազմում հայաստանյան առաջատար ընկերությունների և բուհերի 9 ներկայացուցիչներ էին:

Առաջնության շրջանակներում տեղի ունեցավ նաև «Երիտասարդությունը և ռոբոտաշինությունը» կոնֆերանսը, որտեղ գործարար ներկայացումներով հանդես եկան «Նեյշնլ Ինսթիտուտներ» ընկերությունը՝ «Lab View» ծրագրի ներկայացմամբ, «Մայքրոսոֆթ Առ Էյ» ընկերությունը՝ «Robotics studio» ծրագրի ներկայացմամբ, իսկ «Հուրներ» ընկերությունը՝ դասախոսություն կարդաց ռոբոտատեխնիկայի վերաբերյալ: Նաև տեղի ունեցավ քննարկում «Ռոբոտատեխնիկայի զարգացումը կրթական հաստատություններում» թեմայով, որին մասնակցեցին կրթական համալիրների, համալսարանների ներկայացուցիչներ, ընկերությունների ղեկավարներ, աշակերտներ: Քննարկման արդյունքում որոշվեց ստեղծել ռոբոտ պատրաստելու համար ստանդարտ մասերի հավաքածուներ դպրոցական տարիքի երեխաների համար: Բացի այդ դպրոցականները կքննարկեն և հաջորդ հավաքին կներկայացնեն՝ ինչ տիպի ռոբոտներ են ուզում սարքել, ինչ ձևաչափով են ուզում զբաղվել ռոբոտատեխնիկայով և ինչպես են համախմբելու իրենց շուրջ հասակակիցներին: Ավելացնենք նաև, որ Մ. Մեբաստացի կրթահամալիրը տարածք կտրամադրի քննարկումների, հավաքների համար:

Նշենք, որ Հայաստանի Ռոբոտների Բաց Առաջնությունը կազմակերպիչն է Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միությունը /ԻՏՄ/, իսկ գլխավոր հովանավորն է «Հուրներ» ընկերությունը: